ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/129

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Մասնակից՝ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

1. «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/27» ծածկագրով բաց մրցույթ, Երևան քաղաքի Հակոբ Հակոբյան փողոցի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում:

2. «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/41» ծածկագրով բաց մրցույթ, Երևան քաղաքի մանկապարտեզների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/27» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/41»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7377-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 13.05.2020թ. թիվ 01/61-7725 գրության հիման վրա, 19.05.2020թ.-ին «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 19.05.2020թ.-ին:

20.05.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/129 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

27.05.2020թ.-ին և 18.06.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 27.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.06.2020թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 13.05.2020թ. թիվ 01/61-7725 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) միջև 20.04.2020 թվականին կնքված NN «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/27» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/41» ծածկագրերով պայմանագրերի շրջանակներում ներկայացվել է որակավորման ապահովման բանկային Երաշխիքներ:

Երևանի քաղաքապետարանի կողմից կատարվել է բանկային երաշխիքների իսկության ճշտում, որի արդյունքում պարզվել է, որ ներկայացված բանկային երաշխիքները չեն թողարկվել համապատասխան բանկի կողմից և հանդիսանում են կեղծ փաստաթղթեր:

Հաշվի առնելով, որ Մասնակիցը մինչև պայմանագրի կնքումը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ուստի Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանիորեն լուծվել է վերոնշված պայմանագրերը՝ «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն:

Ելնելով վերոգրյալից՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, Պատվիրատուն կից ներկայացրել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/27» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/41» ծածկագրերով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 20.05.2020թ.-ին գրությամբ դիմել է «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7377-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/129 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.04.2020թ.-ին կնքվել են թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/27» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/41» ծածկագրերով պետական գնման պայմանագրեր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն 04.05.2020թ.-ին տրված թիվ «O.AB.100.7LD.ALLP.0.5161.20» գրությամբ Երևանի քաղաքապետարանին տեղեկացրել է, որ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Բանկ) ունեցած տեղեկությունների համաձայն՝ Երևանի քաղաքապետարանին ներկայացված «Ամերիաբանկ» ՓԲԸ պաշտոնական ձևաթղթին նմանեցված 20.04.2020թ.-ի թիվ O.AB. 100.12CIB.PIED.1.1348.20 «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի բանկային երաշխիքը՝ «ԵՔ-ԲՍՍՁԲ-20/41» ծածկագրով մրցույթին մասնակցելու համար և 20.04.2020թ.-ի թիվ O.AB. 100.12CIB.PIED.1.1350.20 «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի բանկային երաշխիքը՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/27» ծածկագրով մրցույթին մասնակցելու համար ներկայացված երաշխիքները իրականում երբևէ չեն թողարկվել և երբևէ չեն տրվել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից, և ամենայն հավանականությամբ դրանք կեղծվել են անհայտ երրորդ անձի կամ անձանց կողմից, ինչի վերաբերյալ Բանկի համապատասխան աշխատակիցներն արդեն դիմել են իրավապահ մարմիններին:

www.gnumner.am համացանցային կայքում 14.05.2020թ.-ին հրապարակված թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/27» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/41» ծածկագրերով պետական գնման պայմանագրերի միակողմանի լուծման մասին թիվ 01/61-7729 ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.04.2020թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/27» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/41» ծածկագրերով պետական գնման պայմանագրերը Երևանի քաղաքապետարանի կողմից 13.05.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ հաշվի առնելով, որ կատարողը մինչև պայմանագրի կնքումը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի դրույթները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 19.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7377-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: … :

Պայմանագրի 7.3 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ

փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: … :

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը հստակ սահմանել է, որ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Ընդ որում, պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետով՝ որպես պարտավորությունների պատշաճ կատարման իրավական ակտի պահանջ, սահմանվել է պարտավորության խախտման հիմքերը, այն է՝ գնման գործընթացի մասնակցի կողմից կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) ներկայացնելը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.04.2020թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/27» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/41» ծածկագրերով պետական գնման պայմանագրերը Երևանի քաղաքապետարանի կողմից 13.05.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ հաշվի առնելով, որ կատարողը մինչև պայմանագրի կնքումը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի դրույթները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 04.05.2020թ.-ին Երևանի քաղաքապետարանին տրված թիվ «O.AB.100.7LD.ALLP.0.5161.20» գրությամբ հաստատվում է, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի կողմից Պատվիրատուին ներկայացված 20.04.2020թ.-ի թիվ O.AB.

100.12CIB.PIED.1.1348.20 և 20.04.2020թ.-ի թիվ O.AB. 100.12CIB.PIED. 1.1350.20 բանկային երաշխիքներն իրականում երբևէ չեն թողարկվել և երբևէ չեն տրվել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից, և ամենայն հավանականությամբ դրանք կեղծվել են անհայտ երրորդ անձի կամ անձանց կողմից:

Հակառակ փաստի մասին վկայող որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց, Ընթացակարգի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձին չներկայացվեցին, որպիսի պայմաններում հնարավոր կլիներ և կհիմնավորվեր բանկային երաշխիքների իսկության հանգամանքը:

Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը *(տես՝ թիվ ԵԱՆԴ/0479/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 13-ի որոշումը):*

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով ապացուցման առարկան ձևավորվում է ոչ միայն հայցի կամ դրա դեմ բերվող առարկությունների հիմքում ընկած փաստերից, այլև վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավանորմում մատնանշված փաստերից *(տես՝ թիվ ԵԱՔԴ/0232/02/11 գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը):*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7377-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/129 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**